Ալեքսանդր Ծատուրյան

Մուրացկան

Գիտե՞ս, թե արդյոք ո՞ւմ դուռն ես եկել,
Տառապյալ եղբա՛յր, դու լի հույսերով.
Ո՞ւմ սիրտն ես ուզում գթությամբ լցնել.
Շարժել քո անվերջ ցավ ու վշտերով:
Արքայավայել այդ մեծ փառաշուք
Բազում հարկերով ճոխ պալատներում,
Ուր աչքդ հառած՝ թափում ես արցունք,
Եվ խեղդված ձայնով չոր հաց աղերսում
Գիտե՞ս, թե արդյոք անհոգ, անտրտում,
Անծանոթ թշվառ, սև աղքատության,
Ո՞վ է այնտեղ միշտ երգում ու խնդում,
Անձնատուր եղած կյանքի փափկության…
Ո՞ւմ կյանքն է այնտեղ ցերեկ ու գիշեր
Եռում, աղմկում մոլի կրքերով,
Ո՞վ է անխնա մաշում յուր օրեր
Հեշտասեր կյանքի զեխություններով…
Փարթամ մեծացած գոռոզ իշխանի
Ապարանքն է դա, խղճո՛ւկ մուրացկան,
Որի ճոխ տեսքով խաբված, երևի,
Եկել ես և՛ դու շատերի նման
Աղի արցունքով կյանքդ ողբալու
Եվ փարթամասեր իշխանի կրծքում
Ջերմ կարեկցության մի կայծ վառելու:

Բայց, ավա՜ղ, զուր են… զո՛ւր այդ արցունքներ…
Այդտեղ չես գտնիլ մխիթար վըշտիդ,
Անզգա սրտից հուսալ զութ ու սեր
Դեպի աղքատը ցընորք է անմիտ…
Եվ մի՞թե տխուր փորձերը կյանքի
Քեզ չեն համոզել, ո՛վ խղճուկ, թշվառ,
Որ լացն ու վիշտը ցավագար սրտի
Ծաղր ու ծիծաղ են մեծատան համար…

1890, 24 մարտի